ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ**
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF CULTURE AND YOUTH AFFAIRS OF RA
**HISTORY MUSEUM OF ARMENIA**
NON – COMMERCIAL STATE ORGANIZATION

N 06-113 «31» 07 2014 թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3>> ծածկագրով Շրջանակային

համաձայնագիր կնքած բոլոր հնարավոր Մասնակիցներին

«ՀՊԹ-ՇՀԱՇՁԲ-11/3-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում եմ Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ ք. Երևան Հանրապետության հրապարակ 4 հասցեով, մինչև 2014թ. օգոստոսի 13-ի, ժամը $11^{00}$-ն:

Հայտերը կբացվեն <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ -ի շենքում, ք. Երևան Հանրապետության հրապարակ 4 հասցեով 2014թ. օգոստոսի 13-ին, ժամը $11^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ 4, հեռ. (374 10) 52 06 91, 58 27 61, Ֆաքս (37410) 56 53 22